



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԻԿՈՆՈՄԻԿԱԶԻ ՆԱԽԱՐԱՐ

06 սեպտեմբերի 2005թ.  
ք. Երևան

N 930 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Առաջնորդական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «ա» կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Առաջնորդների որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին» N 123-Ն որոշմամբ հաստատված՝ լիազորված մարմնի կողմից առաջնորդների որակավորման քննությունների անցկացման կարգի 5-րդ կետը.

#### հ ր ա մ ա յ ու մ ե մ`

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում առաջնորդների որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը»՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել`

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1998թ. հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում առաջնորդների որակավորման քննությունների ծրագիրը հաստատելու մասին» N 361 հրամանը.

բ) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 1999թ. հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր աուդիտի գծով աուդիտորների որակավորման կարգը, որակավորման հանձնաժողովի անհատական կազմը և կանոնակարգը հաստատելու մասին» N 287 հրամանի 1-ին կետով հաստատված N1-ին, 3-րդ և 4-րդ հավելվածները, ինչպես նաև 2-րդ կետը.

գ) Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2001թ. մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1998թ. հոկտեմբերի 29-ի N 361 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 188 հրամանը.

դ) Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2001թ. հունիսի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր աուդիտի գծով աուդիտորի որակավորում ստացած հայտատուի որակավորման կարգը հաստատելու մասին» N 212 հրամանը:

**Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված  
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի  
նախարարի 2005 թ. սեպտեմբերի 6 -ի N  
930 - Ա հրամանի

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հիմնական խնդիրները, գործառույթները, աշխատակարգը և աուդիտորների որակավորման հետ կապված այլ հարցերը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

#### II. Հանձնաժողովի հիմնական խնդիրները և գործառույթները

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին» N 123-Ն որոշմամբ հաստատված՝ լիազորված մարմնի կողմից աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգի (այսուհետ՝ որակավորման կարգ) պահանջներին համապատասխան աուդիտորի որակավորում ստանալու համար լիազորված մարմին դիմած ֆիզիկական անձանց (այսուհետ՝ դիմող)

որակավորման քննությունների (այսուհետ՝ քննություն) կազմակերպումը և անցկացումը.

բ) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում աուդիտորի որակավորման վկայականի (այսուհետ՝ վկայական) գործողությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերի քննարկումը և եզրակացության տրամադրումը.

գ) որակավորման կարգով սահմանված դեպքերում՝ վկայականն անվավեր ճանաչելու վերաբերյալ եզրակացության տրամադրումը.

դ) հանձնաժողովի գործունեության և քննության կազմակերպման, որակավորման կարգի և սույն կանոնադրության կատարելագործման և հստակեցման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը:

#### 4. Հանձնաժողովն ընդունում է որոշումներ՝

ա) դիմողին քննությանը չներկայացած համարելու վերաբերյալ.

բ) դիմողին քննասենյակից դուրս հրավիրելու վերաբերյալ.

գ) դիմողին քննության երկրորդ փուլ անցնելու վերաբերյալ.

դ) դիմողին աուդիտորի որակավորում տալու վերաբերյալ.

ե) որակավորման կարգի 14-րդ կետով նախատեսված քանակական համամասնությունների սահմաններում քննությունների ծրագրի բաժիններից յուրաքանչյուրի առանձին թեմային վերաբերող թեստերի քանակը սահմանելու վերաբերյալ.

զ) իր իրավասության սահմաններում քննությունների կազմակերպմանը և անցկացմանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ.

է) վկայականի գործողությունը դադարեցնելու, վկայականն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

5. Հանձնաժողովը՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին հաշվետվություն է ներկայացնում նախորդ տարվա կատարած աշխատանքների վերաբերյալ:

### III. Հանձնաժողովի աշխատակարգը

6. Հանձնաժողովի աշխատանքներն իրականացվում են նիստերի միջոցով, որոնք գումարվում են պարբերաբար՝ հանձնաժողովի նախագահի կամ նրա կողմից լիազորված անդամի (այսուհետ՝ հանձնաժողովի նախագահ) որոշմամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ, եթե ստացվել է առնվազն մեկ դիմում:

7. Հանձնաժողովում հարցերի քննարկման ժամանակ կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում է՝

- հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և տեղը,
- հանձնաժողովի կազմը,
- քննարկվող հարցի բովանդակությունը,
- հանձնաժողովի որոշման (եզրակացության) բովանդակությունը,
- տեղեկություններ քննարկմանը մասնակցող անձանց մասին,
- տեղեկություններ դիմողների հավաքած միավորների մասին,
- տեղեկություններ երկրորդ փուլ անցած դիմողների մասին,
- հարցի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները,
- հարցի քննարկման ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերը և այլ ապացույցները,
- քննարկվող հարցերին առնչվող այլ տեղեկություններ:

8. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն 50 տոկոսը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Չայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված հոգուտ դիմողի (համապատասխան դեպքերում՝ հոգուտ աուդիտորի):

9. Սույն կանոնադրության 4-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված որոշումը կայացվում է քննության առաջին փուլն ավարտվելուց հետո՝ նույն օրը, դիմողների աշխատանքները ստուգվելուց հետո:

10. Քննության երկրորդ փուլն սկսելուց առնվազն մեկ ժամ առաջ հրապարակվում է քննության առաջին փուլի արդյունքները:

11. Սույն կանոնադրության 4-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված որոշումը կայացվում է քննության ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ առանձին սենյակում (դռնփակ), որի ժամանակ այդ սենյակում կարող են գտնվել միայն հանձնաժողովի անդամները:

12. Որակավորման կարգով նախատեսված որոշումների ընդունումն ապահովելու և հանձնաժողովի գործունեությունը կազմակերպելու համար հանձնաժողովի նախագահը՝

- սահմանում է քննությունների անցկացման ժամկետները,
- հրավիրում է հանձնաժողովի նիստեր և նախագահում դրանք,
- ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և վկայականները,

- քննարկման է ներկայացնում հանձնաժողովի նիստերին երեք անգամ անընդմեջ չմասնակցած հանձնաժողովի անդամին հանձնաժողովի կազմում թողնելու նպատակահարմարության կամ հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին հարցը և համապատասխան առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին,

- հանձնաժողովի անդամների միջև կատարում է պարտականությունների բաշխում,

- իր լիազորությունների սահմաններում ընդունում է այլ որոշումներ:

13. Հանձնաժողովի քարտուղարը կամ նրա բացակայության ժամանակ հանձնաժողովի նախագահի որոշմամբ քարտուղարի պարտականությունները կատարող հանձնաժողովի այլ անդամը (այսուհետ՝ հանձնաժողովի քարտուղար)՝

ա) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

բ) դիմողներին ծանոթացնում է քննության ընթացակարգին և այն խախտելու հետևանքներին, պատասխանում է նրանց՝ քննությունների ընթացակարգի վերաբերյալ հարցերին.

գ) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, դրանց քաղվածքները և ստորագրում դրանք.

դ) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, որակավորման կարգին և հանձնաժողովի որոշումներին համապատասխան, իրականացնում է հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ աշխատանքներ:

14. Հանձնաժողովի մյուս անդամները՝

ա) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, իրականացնում են հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ աշխատանքներ՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ որակավորման կարգին և հանձնաժողովի որոշումներին համապատասխան.

բ) հանձնաժողովի նիստերին մասնակցելու հնարավորություն չունենալու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին:

15. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով: Հանձնաժողովի գործունեության հետ կապված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերի հաշվին:

16. Հանձնաժողովն իր նիստերի նախապատրաստումը, որոշումների կատարումը, ինչպես նաև դիմողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացումն ապահովելու հետ կապված աշխատանքներն իրականացնելու

նպատակով, համագործակցում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի այն կառուցվածքային ստորաբաժանման հետ, որը կազմակերպում է դիմումների և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը, ուսումնասիրումը, պահպանումը, ինչպես նաև ապահովում է դրանց ամփոփ տեսքով ներկայացումը հանձնաժողովին:

#### **IV. Հանձնաժողովի գործունեության դադարումը**

17. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Հանձնաժողովի գործունեության դադարումից հետո հանձնաժողովի գործունեությանն առնչվող փաստաթղթերը և այլ նյութերը ենթակա են պահպանման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: